ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» «հոկտեմբերի» 2024թ. ՈՄՈ/476-Ա

ք.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N ՄՈ/177-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշման պահանջները, հաշվի առնելով 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ և 2024-2025 թվականների ուսումնական տարվա սկզբի դրությամբ կամավոր ատեստավորված մանկավարժների փաստացի ծանրաբեռնվածությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի ապրիլի 12-ի «Դրամաշնորհ հատկացնելու մասին» N ՄՈ/177-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

2) «1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 10 163 500 (տաս

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

միլիոն մեկ հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:».

3) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

4) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ՝ Ա.Հովհաննիսյանին արտադպրոցական դաստիարակության ծրագրով նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2024 թվականի հոկտեմբերի 9 -ի
ՆՄՈ/ 446 -Ա որոշման

<<Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2024 թվականի ապրիլի 12-ի
ՆՄՈ/177-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ <<ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ>> ԾՐԱԳՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ

2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

Հազար դրամ

հ/հ	*Համայնքի անվանումը*				*Տարի*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Արմավիրի համայնքապետարան				2356.1
2	Վաղարշապատի համայնքապետարան				4893.3
3	Մեծամորի համայնքապետարան				1504.5
4	Փարաքարի համայնքապետարան				1409.6

	ԸՆԴԱՄԵՆԸ				10163.5

>>:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 09.10.2024 17:36:13 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023